ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն ---------------------------- Հ. Դավթյան

«-----------» սեպտեմբերի 2022թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մուշեղ Գալշոյանի անվան 148 ավագդպրոց

______________________________

ուսումնականհաստատությանանվանումը ,

X 3 դասարան

Սուսաննա Ադամյան

ազգանունը, անունը, հայրանունը

« 2022– 2023 » ուսումնականտարի

## Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

### 1.Ներածություն/դասարանի ընդհանուր բնութագիր/

Դասարանի աշակերտների թիվը կազմում է 21 աշակերտ, որից աղջիկ 8, տղա 13:

2.Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

1.Էքսկուրսիաներ Մշակութային վայրեր/

2.Դասղեկի ժամ /յուրաքանչյուր ուրբաթ/

3.Պ/թ լույսընծայում

4.Միջոցառումներ

5.Արշավներ

6.Սպորտային միջոցառումներՆախատեսվում է աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել ստացած գիտելիքները գործնականում կիրառելու, ինքնուրույն մտածելու, որոշումներ ընդունելու և առաջացած խնդիրները լուծելու կարողություններ և հմտություններ: Անցկացնել զրույցներ ու քննարկումներ այնպիսի թեմաներով, որոնք կնպաստեն մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը, սեփական լեզվի, պատմության, ավանդույթների և ազգային այլ արժեքների կարևորությունը գիտացելուն:

3.1 Հայեցի դաստիարակություն.

Հոգևոր դաստրարակություն– զրույցներ անցկացնել բարոյական չափանիշների, համամարդկային արժեքների վերբերյալ: Ձևավորել անձ, որի սկզբունքները լինեն բարությունը, ազնվությունը, պատասխանատվությունը և հանդուրժողականությունը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ձևավորել և զարգացնել գեղագիտական ճաշակ, կազմակերպելով այցելություններ պատմամշակութային տարբեր հաստատություններ: Սովորեցնել տեսնել, գնահատել ու պահպանել գեղեցիկը:

### 3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Քննարկել սեփական պատմության էջերը, առաջ քաշելով ազգային հիմնախնդիրները, հասնել նրան, որ յուրաքանչյուրը գիտակցի իր դերը հայրենիքի պաշտպանության, տարածքային ամբողջականության պահպանման և երկրի զարգացման գործում:

### 3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Հատուկ ուշադրություն դարձնել ֆիզիկական դաստիարակությանը: Առաջնորդվել <<Առողջ մարմնում-առողջ հոգի>> կարգախոսով և աշակերտներին իրազեկել առողջ ապրելակերպի կանոնները:

### 3.5Աշխատանքային դաստիարակություն

Սահմանել հերթապահություն, հետևել դասասենյակի մաքրությանը, մասնակցել շաբաթօրյակներին:

### 3.6 Բնապահպանական դաստիարակություն

Հաճախակի անցկացնել զրույցներ բնապահպանության թեմայով, կազմակերպել էքսկուրսիաներ բնության գրկում, ուշադիր լինել կենդանիների նկատմամբ, կազմակերպել ծառատունկ և մաքուր պահել միջավայրը :

### 3.7 Դպրոց -ընտանիք կապը

Ծնողներին մասնակից դարձնել դասավանդմանը, դպրոցական կյանքին վերաբերող հարցերին և էքսկուրսիաների կազմակերպմանը:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Սեպտեմբեր

**1**շաբաթ- Զրույց << Գիտելիքի օր >> թեմայով

**2**շաբաթ- Սթարմուս **8-11** գիտահանրամատչելի փառատոն Երևանում

**3**շաբաթ- Անկախության օր՝ եթե ես պատգամավոր լինեի

**4**շաբաթ- Հայաստանի պատմամշակութային հուշարձանները

Հոկտեմբեր

**1**շաբաթ- Թարգմանչաց տոն

**2**շաբաթ- Ուսուցչի տոն

**3**շաբաթ- Հայաստանցյան ոսկե աշունը:

Աշնանային արձակուրդներ՝ այցելություն մշակութային կրթօջախներ

Նոյեմբեր—«Հայրենիք,ազգ,մայրենի լեզու»

**1**շաբաթ- « Մարդկային արատներ»

**2**շաբաթ- «Հավատ, գաղափարախոսություն,պատմություն և ժամանակ»:

**3**շաբաթ- «Ես հարգում եմ նաև քո կարծիքը»:

**4**շաբաթ —«Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը»:

Դեկտեմբեր

**1**շաբաթ- «Տարբեր սերունդների անխուսափելի բախումները»:

**2**շաբաթ- Բնական աղետներ

**3**շաբաթ- Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում:

**4**շաբաթ –Ամանորյա միջոցառումներ

Հունվար-

1շաբաթ- 2-րդ կիսամյակի անելիքների քննարկում:

2շաբաթ-«Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի ծննդյան 65-ամյակը»:

3շաբաթ- Հայոց բանակի օր

Փետրվար

**1**շաբաթ- «Բարեգործությունը համամարդկային արժեք»:

**2**շաբաթ- Բարեկենդանից մինչև Սուրբ Զատիկ

**3**շաբաթ- Գրքի տոն, Թումանյանական օրեր

**4**շաբաթ –Մայրենիի օր

Մարտ

**1**շաբաթ- «Գարունը մեր կյանքում»:

**2**շաբաթ- «Ազգային տոներ»:

**3**շաբաթ- «Մեկ օր առանց ինտերնետի»:

**4**շաբաթ - «Աղբի տեսակավորման նշանակությունը»:

Ապրիլ

**1**շաբաթ- «Տիեզերքը և մենք»:

**2**շաբաթ- Մայրության գեղեցկության օր

**3**շաբաթ- «Նոր աշխարհակարգ»:

**4**շաբաթ—Հայոցցեղասպանությանհիշատակի օր

Մայիս

**1**շաբաթ- «Ճակատագի՞ր թե սեփական բախտի տնօրինում»:

**2**շաբաթ- «Հայրենիքի, պետականության արժևորումը»:

**3**շաբաթ-« Մայիսյան հերոսամարտերը»:

**4**շաբաթ - 2-րդ կիսամյակի արդյունքների քննարկում: